

# ՀԱՅՐԵՆԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

## ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

(ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԲԱՆԱՍՅԵՂԻՐԸ)

Անուս

Սասունցի

Դաւիթ

Ողանու

Վանք

Հասրնօր

Զախախ

Բագաւուր

Մայր

Բարեկենդան

Գեղեցկունի

Վասիլիսան

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԲԱՆԱՍՏԵՂԺԸ

Տխրողսները երբեմն զարմանալի պատումութիւններ ունին, — Զայրոյթի մի վայրկեանին, կիսահեշտական եղանակով. Յովհ. Թումանեան իր վրայ առաւ ամենայն հայոց բանաստեղծի տխրոտը և այլևս չկարողացաւ դուրս գալ նրա տակից:

Պատմութիւնը հետեւեալն է. 1915ին էջմիածնում մի վէճ է ծագում Գեորգ Կաթողիկոսի և Յ. Թումանեանի միջեւ՝ տեղակոյն գաղթականներին վերահարանի կիսաւարտ նոր շէնքում տեղաւորելու խնդրով, Կաթողիկոսը, որ լսել անգամ չէր ուզում այդ մասին, իր խօսքն արժեցնելու համար, բացաւանչում է. — «վերջապէս, ես ամենայն հայոց կաթողիկոս եմ», — «վերջապէս, ես էլ ամենայն հայոց բանաստեղծ եմ», բորբոքած վրայ է բերում Յ. Թումանեանը, որին կատաղեցրել էր Կաթողիկոսի վերաբերմունքը դէպի վանքի բակում և Վաղարշապատի փողոցներում Թափթփաւած գաղթականները, Այս վէճը շուտով լայն հասարակութեան սեփականութիւն դարձաւ, և «ամենայն հայոց բանաստեղծ, տիտղոսը մի տեսակ փղովորդականացաւ:

Սկզբում նա բարկանում էր, երբ մենք նրան, «Հորիզոնի» խմբագրատանը, կատակով ամենայն հայոց բանաստեղծ էինք կանչում. բայց վերջը, երբ ամէն կողմից սկսեցին այդ տիտղոսով վրայ տալ՝ նա վաթսեց, երեւի զգալով, որ «ամենայն հայոց բանաստեղծ», յորձրջման մեջ կատակից աւելի մի բան կար ամենքիս համար: Եւ, իրօք, մեր համոզմունքով, այդ տիտղոսը վայելում էր թումանեանին ըստ ամենայնի:

Ամենայն հայոց բանաստեղծ է նա նախ և առաջ այն պատճառով, որ  
մեր բանաստեղծներին ոչ մեկը չէ կարողացել խտացնել իր քերթումաների մեջ  
հայ ժողովրդի լաւ ու վատ բարքերը, տրամադրութիւնները և ձգտումները այն-  
պիսի լրութեամբ, ինչպէս այդ արեւել թումանները իր բազմալար քնարով:

Թուժանեանը ոչ միայն իբրև գրող, այլ և իբրև անձնաւորութիւն խիստ հեծաքրքրական մի տիպ է ներկայացնում, վտաճօրէն կարելի է ասել, որ նրան անձնապէս ճանչցողները, և նոյն իսկ ոչ միայն լաւ կողմից ճանչցողները, նրա մահւան մէջ ողբացին ոչ միայն առանձնակարգ բանաստեղծի, այլ և



## ՅՈՎՀԱՆՆԵՍ ԹՈԻՍԱՆԵԱՆ (ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ)

Յովհաննէս Թումանեան, որ ատեն մը իրաւամբ կոչուած է «Ամենայն հայոց բանաստեղծը», ծնած էր 7 Փետր. 1769ին, Դսեղի մէջ (Լօռի լեռնազաւառին ամենէն մեծ և բարեշէն գիւղերէն)։ Հայրը քահանայ էր՝ Տէր-Թադէոս,— ուսումնասէր, բարի և քաջ անձնաւորութիւն մը։ Թումանեանները Լօռիի հին և յայտնի գերդաստաններէն են, աւանդութիւններով հարուստ։ Պարագայ մը, որ խոր դրոշմ թողած է Թումանեանի բանաստեղծական ստեղծագործութեան վրայ։

Իր նախակրթութիւնը ստացած է հայրենի Դսեղ գիւղին մէջ, խաֆա-վարժապետի մը քով, որ Տէր-Թողիկեան մէթոտով և «գաւազանաւ երկաթեալ» կը դաստիարակէր իր սաները։

Կարճ ժամանակ մը ետք կը տեղափոխուի Լօռի գաւառակին կեդրոնական գիւղը՝ Ճէլալ Օղլի, ուր այն ատեն արդէն կանոնաւոր և բարեկարգ ծխական վարժարան մը կար։ Թումանեան լաւ յիշողութիւններ պահած է իր այդ շրջանի դպրոցական կեանքի շուրջը։

Ճէլալ Օղլիէն զինքը կը տեղափոխեն Թիֆլիս՝ Ներսէսեան վարժարան. կրթական հիմնարկութիւն մը, որ ամբողջ մէկ դար շարունակ լաւագոյն և ամենէն բեղմնաւոր նշանակութիւնը ունեցած է Կովկասահայրութեան վերածնունդին համար, Գ. Ճեմարանին գլուզընթաց։

Թումանեան սակայն Ներսէսեան միջնակարգ վարժարանն իսկ չ'աւարտեր և դուրս կուգայ տակաւին պատանի հասակին մէջ։

Դպրոցէն ելլելէն անմիջապէս ետք կ'ամուսնանայ, հազիւ 19 տարեկան հասակին մէջ։ Կ'ունենայ շատ զաւակներ (կարծեմ տասնեւմէկ), կը կազմէ բազմանդամ և նահապետական ընտանիք մը։ Ընտանեկան հոգերով ծանրաբեռնուած՝ Թումանեան զանազան, երկրորդական պաշտօններ կը փոխադրուի, հաշուակա-



լուծիւն և այլն։ Սակայն ամէն տեղ ալ չեն հաւնիր պաշտօնեայ  
Թումանեանի, (որ արդէն բանաստեղծի համբաւ ձեռք բերած էր), և  
այդ իսկ՝ իր բանաստեղծ ըլլալուն պատճառով։

Շատ շուտով կը լքէ Թումանեան այդ պաշտօնները և ինք-  
զինքը միայն և միայն գրականութեան կը նուիրէ ու կ'ապրի իր  
բանաստեղծ—ոչ միայն կոչուածով, այլև զբաղուածով։

Գրականութենէն դուրս իր ժամանակը և նախը նաև  
հանրային գործերու ի սպաս կը դնէ։ Եղած է գործօն դաշնակցա-  
ցական, մինչև 1910, և համակիր՝ մինչև Հայաստանի խորհրդայ-  
նացումը։ Աշխատակցած է «Թառալ» թերթին, «Մուրճ» ամսա-  
գրին, «Աղբիւր» և «Տարազ»-ին, մասնաւորաբար «Հասկեր» ման-  
կական ամսագրին և այլ պարբերականներու։ Ժամանակ մը խմբ-  
ագրած է նաև Թիֆլիզի «Հորիզոն» թերթը։

Համաշխարհային պատերազմի առաջին տարիներուն գոր-  
ծօն մասնակցութիւն ունեցաւ նաև կամաւորական շարժման կազ-  
մակերպութեան մէջ, իբրև անդամ «Ազգային Բիւրօ»ի,

1919ին Կովկասի մէջ մեծ շուքով տօնուեցաւ իր ծննդեան  
յիսնամեակը։ Հիմնադիրն է Հ.Օ.Կ.ի (1921)։

Թումանեան գրել սկսած է շատ կանուխէն։ Ոտանաւոր-  
ներու փորձեր ըրած է մինչև իսկ մանուկ հասակին մէջ։

Իր լաւագոյն ոտանաւորներէն մին՝ «Շունն ու կատուն»  
գրած է 17 տարեկան հասակին մէջ։

1890 թուականին լոյս տեսած է իր բանաստեղծութիւն-  
ներուն առաջին գրքոյկը, իսկ 1892ին՝ երկրորդը։ Բանաստեղծու-  
թիւններու լիակատար ժողովածուները լոյս են տեսած 1903ին  
Թիֆլիսի մէջ, 1908ին Պաքոսի և 1922ին՝ Պոլսոյ մէջ։

Թումանեան գրած է շարք մը քնարական ոտանաւորներ,  
որոնցմէ մէկ քանին երաժշտագրուած են և շատ տարածուած։ Բայց  
Թումանեան յայտնի է արեւելահայ գրականութեան մէջ աւելի  
իբրև հիմնադիր վիպերգութեան (պոէմներու)։ Այդ տեսակէտէն ան  
իր մրցակիցը չունի։ Նշանաւոր պոէմներն են՝ «Անուշ»ը, որ անոր  
գլուխ գործոցը կը նկատուի, «Թմկաբերդի Առումը», «Փարվա-  
նա», «Լոռեցի Սաքօն», «Մարօ», «Պոէտն ու Մուսան», «Սասունցի  
Դաւիթը», «Դէպի Անհունը» և մէկ քանի ուրիշներ։ Իր պոէմե-  
րուն նիւթը կը կազմէ ժողովրդական կեանքը։

Թումանեան ունի նաև շարք մը մանկական գրուածքներ։

լուծիւն և այլն։ Սակայն ամէն տեղ ալ չեն հաւնիր պաշտօնեայ  
Թումանեանի, (որ արդէն բանաստեղծի համբաւ ձեռք բերած էր), և  
այդ իսկ՝ իր բանաստեղծ ըլլալուն պատճառով։

Շատ շուտով կը լքէ Թումանեան այդ պաշտօնները և ինք-  
զինքը միայն և միայն գրականութեան կը նուիրէ ու կ'ապրի իբր  
բանաստեղծ—ոչ միայն կոչուածով, այլև զբաղուածով։

Գրականութենէն դուրս իր ժամանակը և նախընտրած  
հանրային գործերու ի սպաս կը դնէ։ Եղած է գործօն դաշնակցա-  
ցական, մինչև 1910, և համակիր՝ մինչև Հայաստանի խորհրդայ-  
նացումը։ Աշխատակցած է «Թառալ» թերթին, «Մուրճ» ամսա-  
գրին, «Աղբիւր» և «Տարազ»-ին, մասնաւորաբար «Հասկեր» ման-  
կական ամսագրին և այլ պարբերականներու։ Ժամանակ մը խմբ-  
ագրած է նաև Թիֆլիզի «Հորիզոն» թերթը։

Համաշխարհային պատերազմի առաջին տարիներուն գոր-  
ծօն մասնակցութիւն ունեցաւ նաև կամաւորական շարժման կազ-  
մակերպութեան մէջ, իբրև անդամ «Ազգային Բիւրօ»ի,

1919ին Կովկասի մէջ մեծ շուքով տօնուեցաւ իր ծննդեան  
յիսնամեակը։ Հիմնադիրն է Հ.Օ.Կ.ի (1921)։

Թումանեան գրել սկսած է շատ կանուխէն։ Ոտանաւոր-  
ներու փորձեր ըրած է մինչև իսկ մանուկ հասակին մէջ։

Իր լաւագոյն ոտանաւորներէն մին՝ «Շունն ու կատուն»  
գրած է 17 տարեկան հասակին մէջ։

1890 թուականին լոյս տեսած է իր բանաստեղծութիւն-  
ներուն առաջին գրքոյկը, իսկ 1892ին՝ երկրորդը։ Բանաստեղծու-  
թիւններու լիակատար ժողովածուները լոյս են տեսած 1903ին  
Թիֆլիսի մէջ, 1908ին Պաքոսի և 1922ին՝ Պոլսոյ մէջ։

Թումանեան գրած է շարք մը քնարական ոտանաւորներ,  
որոնցմէ մէկ քանին երաժշտագրուած են և շատ տարածուած։ Բայց  
Թումանեան յայտնի է արեւելահայ գրականութեան մէջ աւելի  
իբրև հիմնադիր վիպերգութեան (պոէմներու)։ Այդ տեսակէտէն ան  
իր մրցակիցը չունի։ Նշանաւոր պոէմներն են՝ «Անուշ»ը, որ անոր  
գլուխ գործոցը կը նկատուի, «Թմկաբերդի Առումը», «Փարվա-  
նա», «Լոռեցի Սաքօն», «Մարօ», «Պոէտն ու Մուսան», «Սասունցի  
Դաւիթը», «Դէպի Անհունը» և մէկ քանի ուրիշներ։ Իր պոէմե-  
րուն նիւթը կը կազմէ ժողովրդական կեանքը։

Թումանեան ունի նաև շարք մը մանկական գրուածքներ։

Այդ կողմէ եւս ան մասնակի և պատուաւոր տեղ մը կը գրաւէ մեր գրականութեան մէջ։ Յայտնի են և մանուկներու կողմէ շատ սիրուած իր «Մի Կաթիլ Մեղրը», «Չարի Վերջը», «Գառնիկ Ախպէրը», «Անբախտ Վաճառականները», «Քաջ Նազարը» և մեծ ու փոքր ուրիշներ։

Թումանեան «Լուսաբեր» հայերէնի դասագրքին հեղինակներէն մին է (Լ. Շանթի և Լիսիցեանի հետ)։

Թումանեանի լեզուն պարզ է, մաքուր աշխարհաբար և ժողովրդական աստվածներով համեմուտք։ Անոր ոտանաւորներէն շատեր և պոէմներէն մէկ քանին թարգմանուած են ռուսերէնի և այլ լեզուներու։ Ինք եւս ռուսական և եւրոպական բանաստեղծութեանց քանի մը գոհարներ թարգմանած է հայերէնի, շատ յաջող կերպով և ընտիր լեզուով մը։ Թումանեան նոր կարգերուն բերելիք խաղաղութիւնը և բարգաւաճումը զգացող առաջին մտաւորականներէն մէկն էր։ Գնահատուած էր նաեւ Սովիէթ Հայաստանի իշխանութենէն և վարած պատուաւոր պաշտօններ։

1922ին հիւանդացած է քաղցկեղով։ Թիֆլիսէն, ուր կը բնակէր, փոխադրուած է Մոսկուա, բուժուելու համար։ Կը խորհէին զինք Պերլին տանիլ, երբ մահը վրայ հասած է 1923 Մարտ 23-ին։

Յովհաննէս Թումանեան հայրենի գրականութեան պատմութեան մէջ գրաւած է, արժանաւորապէս, պատուաւոր տեղ մը։

## ՀԱՏՈՒԱԾՆԵՐ ԱՆՈՒՇ ՊՈԷՄԱՅԻՑ

### ԱՌԱՋԻՆ ԵՐԳ

Կանչում է կրկին, կանչում անդադար  
էն չըքնաղ երկրի կարօտը անքուն,  
Ու՛ թեւերն ահա փռած տիրաբար՝  
Թռչում է հոգիս, թռչում դէպի տուն:  
Ուր որ հայրենի օջախի առաջ  
Վաղո՛ւց կարօտով ըսպասում են ինձ,  
Ու ձմրան երկար գիշերը նըստած  
Խօսում են Լօռու հին-հին քաջերից:

Դէպ էն սարերը, որ վես, վիթխարի,  
Հարբած շարքերով բռնած շուրջպարի,  
Հըսկա՛յ շուրջպարի բռնած երկընքում,  
Հըրճւում են, ասես էն մեծ հարսանքում  
Պերճ Արագածի նազելի դըստեր,  
Որ Դեւ-Ալ, Դեւ-Բեթ և այլ հըսկաներ,  
Խօլ-խօլ հըսկաներ հընոց աշխարհի,  
Փախցըրին բերին անառիկ Լօռի:

Է՛յ հին ծանօթներ, է՛յ կանանչ սարեր,  
Ահա ձեզ տեսայ ու միտըս ընկան,  
Առաջըս եկան երջանիկ օրեր,  
Սիրելի դէմքեր, որ հիմի չըկան:  
Անցել են, ոնց որ ծաղկունքը պէս-պէս,  
Որ անցած գարնան կային ձեր լանջում:  
Անցել ձեր գլխի հերւան ձիւնի պէս,  
Բայց եկել եմ ես՝ նըրանց եմ կանչում:

Ողջո՛յն ձեզ, կեանքիս անդրանիկ յուշեր,  
Որբացած հոգիս ողջունում է ձեզ,  
Թռչուն կարօտով փընտռում ձոր ու լեռ,  
Դիւթական ձայնով կանչում է հանդէս:

Դո՛ւրս եկէ՛ք կըրկին շիրմից , խաւարից ,  
Դո՛ւրս եկէ՛ք տեսնեմ , շօշափեմ , վըսեմ ,  
Կեանքով շընչեցէ՛ք , ապրեցէ՛ք նորից ,  
Լըցրէ՛ք Պոէտի հաճոյքը վըսեմ . . .

### ՀԻՆԳԵՐՈՐԴ ԵՐԳ

Ինչպէս մի հեղեղ վեր կենար յանկարծ ,  
Երկընքի մըթնած ամպերից իջնէր ,  
Ինչպէս փոթորիկ սաստիկ սրընթաց ,  
Դիւղից սըլացան մի խումբ կըտրիճներ :  
Յոււից տաքացած էլ բան չեն հարցնում ,  
Թըռչում են , ասես ահից հալածւած ,  
Ու նրանց առջև ահեղի բացւում ,  
Թըշշում է ձորը արիւնով լըցւած :

Դիւղը դատարկւեց մի ակընթարթում ,  
Քարափը գըլխին կանգնած անհամբեր ,  
Լո՛ւռ , սըրտատըրոփ ականջ են դընում ,  
Նայում են ներքե . . . ձէն չի գալիս դեռ .  
Դերեղն է մենակ անդընդում՝ յուզւած՝  
Խըլածայն ողբով սողում դէպի ցած :

Ու մարդասպանը դուրս ելաւ ձորից ,  
Դէմքը այլայլւած , քայլուածքը մոլոր :  
Սարսափ է կաթում արնոտ աչքերից ,  
Եւ կերպարանքը փոխւած է բոլոր :  
Առանց նայելու մարդկանց երեսին ,  
Առանց խօսելու , սեւակնած , դաժան ,  
Մօտեցաւ սրահին , կախ տուաւ սընին  
Սեւ հրացանը , սեւ օձի նըման :  
Պապանձեց նոյնպէս ամբոխը մեխւած ,  
Ոչ ոք ժըպըտալ չի համարձակւում ,  
Մենակ մի հոգի անզուսպ կատաղած՝  
Հարա՛յ է կանչում , երեսը պոկում :

Մեռած չորանի պառաւ նանն է նա՝  
Ցաւից խելագար բառաչում, լալիս .  
Տարաբախտ ծընող, վազում է ահա,  
Ցորիցն է տըխուր գոռոցը գալիս :

#### ՎԵՅԵՐՈՐԴ ԵՐԳ

Համբարձման գիշեր, էն դիւթիչ գիշեր,  
Կայ հըրաշալի, երջանիկ վայրկեան .  
Բացում են ոսկի երկընքի դըռներ,  
Ներքե պապանձում, լըռում ամէն բան,  
Ու աստուծային անհաս խորհըրդով  
Լըցում բովանդակ նըրա սուրբ գըթով :

Էն վեհ վայրկենին չըքնաղ գիշերի՝  
Երկընքի անհո՛ւն, հեռու խորքերից  
Լէնժուրազ մեռած սիրահարների  
Աստղերը թըռած իրար են գալիս .  
Գալի՛ս՝ կարօտով մի հեղ համբուրում  
Աշխարհից հեռո՛ւ, լազուր կամարում :

1901

### ՀԱՏՈՒԱԾՆԵՐ ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱԻԻԹ ՊՈԷՄԱՅԻՑ

Ելաւ Օհանը ճարը կըտըրւած,  
Գնացին տեսան՝ էլ ի՛նչ որսարար .  
Անտառը ջարդած, պարիսպն աւերած,  
Բուրգերը արած գետնին հաւառար...

..

Գիշերը հասաւ, մընացին էնտեղ :  
Ձէնով Օհանն էր, իր նետն ու աղեղ  
Դըրաւ գլխի տակ, հանգիստ խըռմփաց .  
Դաւիթը մընաց մըտքի ծովն ընկած,

Մին էլ նկատեց, որ մօլթը հեռուում  
 Մի թեժ, փայլփլուն կըրակ է վառուում:  
 Էն լուսը բըռնած՝  
 Վեր կացաւ, գընաց,  
 Գընաց ու գընա՛ց, բարձրացաւ մի սար,  
 Բարձրացաւ, տեսաւ մի մեծ մարմար քար  
 Կիսից պատըռւած,  
 Ու միջից վառւած  
 Բըխում է լուսը պա՛րզ, քուլա-քուլա՛,  
 Բարձրանում, իջնում յետ քարի վըրա:  
 Վար իջաւ Դուռիթ էնտէղից կըրկին,  
 Վար իջաւ, կանչեց Ձէնով Օհանին:  
 — Ե՛լ, հօրեղբայր, քանի՞ քընես,  
 Ե՛լ, էն պայծառ լուսը մի տես:  
 Լուս է իջել բարձըր սարին,  
 Բարձըր սարին, մարմար քարին.  
 Ե՛լ, հօրեղբայր, անուշ քընից.  
 Էն ի՞նչ լուս է բըխում քարից:  
 Ելաւ, խաչ քաշեց Օհանն երեսին.  
 — Է՛յ, որդի, ասաւ, մեռնեմ իր լուսին,  
 Էն մեր Մարութա սարն է զօրաւոր:  
 Էն լուսի տեղը կանգնած էր մի օր  
 Սասմայ ապաւէն, Սասմայ պահապան  
 Մեր սուրբ Տիրամօր վանքը Չարխափան:  
 Մըշտական, երբ որ կըռիւ էր գընում,  
 Էնտեղ էր քո հէրն իր աղօթքն անում:  
 Դու հէրը մեռաւ, Աստուած խըռովեց,  
 Մըսրա թագաւոր զօրքեր ժողովեց,  
 Մեր վանքն էլ եկաւ քանդեց էն սարում,  
 Բայց դեռ սեղանից լուս է բարձրանում...

. . . . .

Էս սր տեսաւ Մըսրա բանակ,  
Ջուր կըտրըւեց ահ ու վախից,  
Դաւիթ կանչեց.—Մի՛ վախենաք,  
Ակա՛նջ արէք հալա դեռ ինձ:

Դուք ըռանչար մարդիկ, ասաւ,  
Ջուրկ ու խաւար, քաղցած ու մերկ,  
Հազար ու մի կըրակ ու ցաւ,  
Հազար ու մի հոգսեր ունէք:

Ի՛նչ էք առել նեո ու աղեղ,  
Եկել թափել օտար դաշտեր:  
Չէ՞ որ մենք էլ ունենք տուն-տեղ,  
Մենք էլ ունենք մանուկ ու ծեր...

Ձանձրացե՛լ էք խաղաղ ու հաշտ  
Հողագործի օր ու կեանքից,  
Թէ՞ զըզւել էք ձեր հանդ ու դաշտ,  
Ձեր հունձ ու փունջ, վար ու ցանքից...

Դարձէ՛ք եկած ճանապարհով  
Ձեր հայրենի հողը Մըսրա.  
Բայց թէ մին էլ զէնք ու զօռով  
Վեր էք կացել դուք մեզ վըրայ,

Հորում լինեն քառսուն գազ խոր  
Թէ քաղացի քարի տակին,—  
Կ'ելնեն ձեր դէմ, ինչպէս էսօր,  
Սասմայ Դաւիթ, Թուր-Կեծակին:

Էն ժամանակ Աստուած գիտի,  
Ով մեզանից կըլնի փռչման.  
Մե՞նք, որ կ'ելնենք ահեղ մարտի,  
Թէ դուք, որ մեզ արիք դուշման...

Դտհիճն եկաւ ոտից գլուխ  
Կարմիր հագած ու արիւն ,  
Ու դուրս տարան իր պալատից  
Թըմկայ չըքնաղ տիրուհուն :

Տարան անտակ էն ժէռ քարից ,  
Որ կանգնած է մինչ էսօր ,  
էն անաւոր քարի ծէրից  
Դըլօրեցին դէպի ձոր :

Գէլ ու աղուէս եկան հանդից  
Ագահ սիրտը լափեցին ,  
Ցին ու ագռաւ իջան ամպից ,  
Սև աչքերը հանեցին :

Անցաւ անտես սև աննըման  
էն սիրունը աշխարհից ,  
ինչպէս ծաղիկն անցած գարնան ,  
Որ չի ծաղկիլ էլ նորից :

Անցաւ զալուժ էն մեծ արքան  
Իրեն փառքով ու զօրքով ,  
Անցաւ Թաթուլն էն յաղթական  
Ու իր քաջերն էն կարգով :

Ու նրանցից մենակ անմեռ  
էս զրոյցը հասաւ մեզ ,  
Որ մեզանից յետոյ էլ չեւ  
Պէտք է խօսուի միշտ էսպէս :

Հէ՛յ , պարոններ . ականջ արէ՛ք  
Թափառական աշուղին ,  
Սիրո՛ւն տիկնայք , ջահե՛լ տըղերք ,  
Լաւ ուչ դրէք իմ խաղին :

Ամէնքս էսպէս հիւր ենք կեանքում  
Մեր ծնընդեան փուճ օրից ,  
Հերթով՝ գալիս անց ենք կենում  
էս անցաւոր աշխարհից :

Անց ենք կենում . . . միայն անմահ  
Գործն է խօսւում լաւ ու վատ .  
Ա՛խ , երտնի՛ ով մարդ կըգայ  
Ու մարդ կ'երթայ անարատ :

# ԱՂԱԻՆՈՒ ՎԱՆՔԸ

Լէնկթեմուրն եկաւ, հուրն ու սուրն եկաւ,  
Անորէնն եկաւ, եկա՛ւ ու եկա՛ւ,  
Հաւաքեց, կիտեց մեր ազգը Հայոց,  
Փաթաթեց, պստեց, ինչպէս վիշապ-օձ,  
Կանգնեց Սեւանայ ափին հովասուն,  
Էնտեղ, ուր՝ ուշքը ու միտքն Աստրծուն՝  
Անհունն է խորհում, մեռնեմ իր զօրքին,  
Օհաննայ վանքը ծովի եզերքին:  
Ին վանքում, Հայոց ազգին պահապան,  
Աղօթք էր անում ձերուկ հայր Օհան,  
Աղօթք էր անում իր հոգու համար,  
Իր ազգի համար, աշխարհքի համար:  
Երբ տեսաւ խաղաղ վանքիցը իրեն  
Անորէն մարդու գործն անորէն,  
Խրոսովեց արդար ծերունու հոգին,  
Ճերմակ միրուքով, իր ցուպը ձեռքին,  
Դառնացած, զգոհ մարդուց ու կեանքից,  
Աղօթքը կիսատ դուրս եկաւ վանքից,  
Իջաւ Սեւանայ երեսը կապոյտ,  
Ու քրթմընջալով, միամիտ, անփոյթ,  
Ին վէտ-վէտ, ծրփուն ջրերի վերայ  
Ցամաք ոտներով գընում էր ահա:  
Տեսաւ հըրաշքը Լենկթեմուրն ափից,  
Տեսաւ, սասանեց տեղը սարսափից:  
Կանչեց, աղաչեց իշխանը թաթար.  
— Ե՛տ արի, ասաւ, ե՛տ արի. արդա՛ր,  
Ե՛տ արի, ասաւ, ո՛վ դու Աստծու մարդ:  
Ետ եկաւ մեր հայր Օհանը հանդարտ,  
Իր ցուպը ձեռին, ջրերի վերով,  
Ու առաջն ելաւ թաթարը օիրով:  
— Ի՞նչ ես ուզում դու, ո՛վ սուրբ ալեւոր,  
Գա՞նձ, իշխանութի՛ւն, թէ կեանք փառաւոր...»  
— Քո փառքն ու գանձը հարկաւոր չեն ինձ,  
Իմ ժողովուրդն եմ ուզում ես քեզնից:  
Ուզում եմ թողնես՝ գընան ուր կուգեն,  
Ու ազատ իրենց կեանքի ձէնն ձածեն  
Էս լէն աշխարհքում, արեւի տակին...»

Ասաւ սուրբ մարդը մեծ աւազակին,  
Ժողովուրդ կուզե՞ս... Լա՛ւ, լինի էդպէս,  
Էս վանքովը մին ժողովուրդ տամ քեզ,  
Գընա ինձ համար աղօթք արա, ծե՛ր»:  
Ասաւ Լենկթեմուրն ու տըւաւ պատուէր,  
Որ գերի Հայոց ազգը մի թեւից  
Էն վանքը մտնի սուրբի ետեւից.  
Ինչքան ժողովուրդ մըտնի էն վանքը,  
Նրան է բաշխում էնքանի կեանքը:  
Հրաման արաւ իրեն զօրքերին  
Ու բաց թողեցին հայ ազգի գերիին:  
Մըտնում է գերին, մըտնում մի ծէրից,  
Անցել է թիւը հարիւր հազարից,  
Ձի լցւում սակայն հասարակ մի վանք...  
Ապշում է թաթարն—արմա՛նք ու զարմանք:  
— Թողէ՛ք, կանչում է իրեն զօրքերին,  
Յորձանք է տալի նորից հայ գերին:  
Գալիս է գերին, գալիս է նորից,  
Անցել է թիւը հազար հազարից,  
Ձի լըցւում սակայն էն վանքը կրկին,  
Ձի կանգնում հայի հոսանքն անագին:  
Երրորդ անգամն է կանչում զօրքերին.  
Գալիս է անցնում մնացած գերին:  
Անցնում է գերին, անցնում շարեշար,  
Էլ մարդ չըմնաց, գընա՛ց ինչ որ կար,  
Դատարկ է սակայն վանքը տակաւին...  
Թեմուր զարհուրած դառնում է չորս դին.  
— Ձա՛րթուն եմ արդեօք, թէ երազ տեսայ...  
Յայտնեցէք ինձ չո՛ւտ, ի՞նչ հըրաշք է սա...  
Գընում են, տեսնում մարդիկն իր զրկած—  
Մեր հայր Օհանը՝ աղօթքի չոքած,  
Աչքերն երկընքին, միրուքն արցունքոտ,  
Ով որ հայ ազգից մտել է իր մօտ,  
Իր սուրբ աղօթքով, կամքով Վերինի,  
Փոխել է իսկոյն դարձրել աղաւնի,  
Բաց պատուհանից թողել ամենքին,  
Թըռքրել դէպ իրենց լեռները կրրկին,  
Ու հիմի վանքում էլ չըկայ ոչ ոք,  
Ինքն է աղօթում մենակ, ծընկաչոք:  
1921

## ԱՅՎԱԶՈՎՍԿՈՒ ՆԿԱՐԻ ԱՌՋԵՒ

Ելած՝ ովկիանի անզուսպ ալիքներ  
Ծանրը յորձանքով զարկելով դէպ վեր  
Լեռնանում էին, գոռալով ահեղ  
Եւ մըրրիկն ուժգին շընչում էր այնտեղ  
Անեղը ու անվերջ  
Տարածութեան մէջ:

«Կանգնեցէ՛ք, գոչեց վըրձինը ձեռքին  
Կախարդ ծերունին յուզուած տարերքին .  
Ու լուռ, հընազանդ հանճարի ձայնին,  
Մութ ալիքները փոթորկի ժամին  
Կըտաւ ի վըրայ  
Կանգնած են ահա:

1894

••

Եթէ մի օր, անո՛ւշ ընկեր,  
Գաս այցելու իմ շիրմին  
Ու նորաբոյս վառ ծաղիկներ  
Տեսնես փըռած չորս կողմին,  
Դու չը կարծես թէ հասարակ  
Ծաղիկներ են ոտքիդ տակ,  
Կամ թէ գարունն է այն բերել,  
Իմ նոր տունը զարդարել:

Նրանք չերգած իմ երգերն են,  
Որ սրտումըս ես տարայ,  
Նըրանք սիրոյ այն խօսքերն են,  
Որ դեռ չասած ես մեռայ:

Նրանք իմ քերմ համբոյրներն են,  
Այն աշխարհից ուղարկւած,  
Որի ճամբէն քո առաջիկ  
Պերեզմանով է փակւած...

1894

## Վ Ա Յ Ր Է Ջ Ք

Քառասուն տարի բռնած ճանապարհ՝  
Շիտակ, անվեհեր  
Գընում եմ ես վեր—  
Դէպ Անյայտը սուրբ, աշխարհքը պայծառ:

Քառասուն տարի ճամբովն ահարկու  
Անցել եմ էսպէս  
Ու հասել եմ ես,  
Խաղաղութեանն եմ հասել ես հոգու:

Թողել եմ ներքեւ, մեծ լերան տակին,  
Ե՛ւ փառքը, և՛ գանձ,  
Եւ քէն, և նախանձ.—  
Ամէնը, ինչ որ ճընշում է հոգին:

Եւ էն ամէնը, արդ նայում եմ ես —  
Տեսնում եմ նորից  
Իմ լերան, ձէրից.—  
Էնպէս հասարակ, դատարկ են էնպէ՛ս...

Եւ ես իմաստուն ու բեռն թեթեւ,  
Անհագ ծիծաղով,  
Երգով ու տաղով  
Իջնում են զըւտրթ իմ լերան ետեւ:

1909. (բանտում)

✱

Տաղով եկաւ  
Ախով գնաց Սայաթ Նովան.  
Երգով եկաւ  
Վէրքով գնաց Սայաթ Նովան.  
Սիրով եկաւ  
Սրով գնաց Սայաթ Նովան.  
Սիրով մնաց Սայաթ Նովան:

1913 Ապրիլ 7

## ՀԱՅՐԵՆԻՔԻՍ ՀԵՏ

Վաղուց թէև իմ հայեացքը Անյայտին է ու հեռուում  
Ու իմ սիրտը իմ մտքի հետ անհուններն է թափառում,  
Բայց կարօտով ամէն անգամ երբ դառնում եմ դէպի քեզ՝  
Մըղկորում է սիրտըս անվերջ քո թառանչից աղեկէզ,  
Ու գաղթական զաւակներիդ լուռ շարքերից ուժասպառ,  
Ե՛ւ գիւղերից, և՛ շէների՜ց՝ տըխո՛ւր, դատարկ, ու խաւար,  
    Զարկւած հայրենիք,  
    Զըրկւած հայրենիք:

Խըռնըւում են մըտքիս հանդէպ բանականքը անհամար,  
Տըրորում են քո երեսը, քո դաշտերը ծաղկավառ,  
Ու ջարդարար վոհմականքը աղաղակով վայրենի,  
Աւարներով, աւերներով, խնջոյքներով արիւնի,  
Որ դարձըրին քեզ մըշտական սև ու սուգի մի հովիտ,  
Խեղճ ու լալկան քո երգերով, հայեացքներով անժըպիտ,  
    Ողբի՛ հայրենիք,  
    Որբի՛ հայրենիք:

Բայց հին ու նոր քո վէրքերով կանգնած ես դու կենդանի,  
Կանգնած խոհո՛ւն, խորհրդաւոր ճամբին նորի ու հընի.  
Հառաչանքով սըրտի խորքից խօսքես խօսում Աստծու հետ  
Ու խորհում ես խորին խորհուրդ տանջանքներում չարաղէտ,  
Խորհում ես դու էն մեծ խօսքը, որ տի ասես աշխարհքին  
Ու պիտ դառնաս էն երկիրը, ուր ձգտում է մեր հոգին —  
    Յոյսի՛ հայրենիք,  
    Լոյսի հայրենիք:

Ու պիտի գայ հանուր կեանքի արշալոյսը վառ հազած,  
Հազա՛ր հազար լուսապայծառ հոգիներով ճառադած,  
Ու երկնահաս քո բարձունքին, Արարատի սուրբ լտնջին,  
Կենսածըպիտ իր շողերը պիտի ժըպտան առաջին.  
Ու պոէտներ, որ չեն պղծել իրենց շուրթերն անէծքով,  
Պիտի գովեն քո նոր կեանքը նոր երգերով, նոր խօսքով,  
    Իմ նո՛ր հայրենիք,  
    Հըզօ՛ր հայրենիք...

1915

## ԶԱԽԶԱԽ ԹԱԳԱԻՈՐԸ

Լինում է, չի լինում մի աղքատ ջաղացպան:

Էս ջաղացպանը մի օր գնում է ջաղացի ջուրը թողնի, գալիս է տեսնում՝ մի կտոր չոր պանիր ունէր՝ չկայ:

Մին էլ գնում է ջուրը կապի, գալիս է տեսնում՝ մի կտոր մոխրոտ բաղաճ ունէր՝ չկայ:

Էս ո՞վ կլինի, ո՞վ չլինի: Մտածում է մտածում ու ջաղացի չէմքում թակարդ է լարում: Առաւօտը վեր է կենում, տեսնում՝ մի աղուէս է ընկել մէջը:

— Հը՞, գող անծւած, կաց՝ հիմի ես քեզ ցոյց կտամ: — Ասում է ու լինգը վերցնում:

Աղուէսը աղաչանք պաղատանք է անում:— Ինձ մի սպանի, — ասում է, — մի կտոր պանիրն ի՞նչ է, որ դրա համար ինձ սպանում ես: Կենդանի բաց թող, ես քեզ շատ լաւութիւն կանեմ:

Ջաղացպանը լսում է, կենդանի բաց է թողնում:

Էս աղուէսը գնում է, էդ երկրի թագաւորի աղբանոցում ման է գալի ման, մի ոսկի է գտնում: Վազ է տալի թագաւորի մօտ:

— Թագաւորն ապրած կենայ, ձեր կոտը մի տուէք, Ձախ չախ թագաւորը մի քիչ ոսկի ունի, չափենք ետ կբերենք:

— Էդ ո՞վ է:

— Դու դեռ չես ճանաչում, — պատասխանում է աղուէսը: — Սա մի շատ հարուստ թագաւոր է, ես էլ իր վէզերն եմ: Կոտը տուր, տանենք ոսկին չափենք. յետոյ կճանաչես:

Կոտը առնում է տանում, աղբանոցում գտած ոսկին ամրացնում կոտի ձեղքում, իրիկունը բերում, ետ տալի:

— Օ՜ֆ, — ասում է, — զօռով չափեցինք:

— Մի՞թէ ճշմարիտ սրանք կոտով ոսկի են չափել, — մտածում է թագաւորը: Կոտը թափ է տալի, զրնգալէն մի ոսկի է վեր ընկնում:

Միւս օրը աղուէսը ետ է գալիս, թէ՛ Ձախչախ թագաւորը

մի քիչ ակն ու մարգարիտ ունի. ձեր կոտոր տուէք, չափենք կրե-  
րենք:

Կոտն առնում է տանում: Մի մարգարիտ է գտնում.  
Կոխում է կոտի արանքը, էլ ետ իրիկունը ետ բերում:

— Օ՜ֆ, — ասում է, — մեռանք մինչև չափեցինք:

Թագաւորը կոտը թափ է տալի, մարգարիտը դուրս է թռ-  
չում:

Մնում է զարմացած, թէ էս Չախչախ Թագաւորն ինչքան  
հարուստ պէտք է լինի, որ ոսկին, ակն ու մարգարիտը կոտով է  
չափում:

Անց է կենում մի քանի օր: Մի օր էլ աղուէսը գալիս է  
Թագաւորի մօտ խնամխօս, թէ՛ Չախչախ Թագաւորը քու աղջիկն  
ուզում է:

Թագաւորն ուրախանում, աշխարհքով մին է լինում:

— Դէ գնացէք, — ասում է, — շուտ արէք, հարսանիքի  
պատրաստութիւն տեսէք:

Թագաւորի պսլատում իրար են անցնում, իսկ աղուէսը  
ջաղացն է վազում:

Վազում է ջաղացպանին աչքովոյ տալի, թէ՛ հապա Թա-  
գաւորին աղջիկը քեզ համար ուզել եմ: Պատրաստ կաց, որ գնանք  
հարսանիք անենք:

— Վա՛յ, քու տունը քանդւի, այ աղուէս, էդ ինչ ես ա-  
րելի—ես ով, Թագաւորի աղջիկը ով: Ոչ ապրուստ ունեմ, ոչ  
տուն ու տեղ, ոչ մի ձեռք չոր... Հիմի ես ի՞նչ անեմ...

— Դու մի՛ վախենայ, ես ամէն բան կանեմ. — հանգստո-  
ցընում է աղուէսն ու ետ վազում Թագաւորի մօտ:

Ընկնում է պալատը. — Հայ հարա՛յ, Չախչախ Թագաւորը  
մեծ հանդէսով գալիս էր, որ պսակւի: Ծամբին թշնամի զօրքերը  
վրայ տւին, մարդկանց կոտորեցին, ամէն բան տարան: Ինքը ա-  
զատուեց փախաւ: Ձրում մի ջաղաց կայ, ելել է մէջը մտել:  
Շուտով չոր հասցրէք, ձի հասցրէք գայ պսակւի, որ գնա իր թռչ-  
նամիներից վրէժն առնի:

Թագաւորն իսկոյն Թագաւորական չորեր է տալիս աղուէ-  
սին, հետն էլ շատ ձիաւորներ և գնում, որ պսակով ու փառքով  
իր փեսին պալատ բերեն:

Դալիս են հանդէսով ջաղացի դռանը կանգնում: Աղուէսը  
ջաղացպանի քուրքը հանում է. Թագաւորի չորերը հագնում,  
նստեցնում է նոյն դիւն: Շրջապատում մեծամեծներով, առջե-  
ւից ձիաւորներ, ետեւից ձիաւորներ— էսպէս հանդէսով բերում են

Թագաւորի պալատը: Իր օրոքը պալատ հտեսած ջաղացպան—ընչ-կըլւած, բերանը քաց մին չորս կողմն է նայում, մին հագի չորեքին է նայում, խլշկոտում ու զարմանում:

— Էս ինչո՞ւ հտեսի նման դէս ու դէն է նայում, աղուէս ախպէր, հարցնում է Թագաւորը: — Կարծես տուն չլինի տեսած, չոր չլինի հագած:

— Ձէ՛, դրանից չի.— պատասխանում է աղուէսը: Նայում է ու համեմատում իր ունեցածի հետ, թէ իր ունեցածը ո՞րտեղ, էս որտեղ...

Նստում են ճաշի: Տեսակ-տեսակ կերակուրներ են բերում: Ջաղացպանը չի իմանում որին ձեռք տայ կամ ինչպէս ուտի:

— Ինչո՞ւ չի ուտում, աղուէս ախպէր,—հարցնում է Թագաւորը:

— Գալու ժամանակ ճամբին որ կողոպտեցին, նրա համար միտք է անում: Ձէք կարող երեւակայել, տէր Թագաւոր, թէ ինչքան բան տարան ե՛լ վերջապէս ինչ անպատուութիւն էր էդ մեր Թագաւորի համար: Ի՞նչպէս հաց ուտի, պատասխանում է աղուէսը հառաչելով:

— Բան չկայ, դարդ մի՛ անի, սիրելի փեսայ, աշխարհք է, էդպէս էլ կպտահի. խնդրում է Թագաւորը: — Այժմ հարսանիք է, ուրախանանք, քէֆ անենք:

Ու քէֆ են անում, ուտում, խմում, ածում, պար գալի. եօթ օր, եօթ գիշեր ր հարսանիք անում: Աղուէսն էլ դառնում է քաւոր:

Հարսանիքից յետոյ Թագաւորը իր աղջկանը մեծ բաժինք է տալի և հոնդէսով ճամբայ դնում Չախչախ Թագաւորի մօտ:

— Կացէք, ես առաջ գնամ տունը պատրաստեմ, դուք իմ ետեւից եկէք, — ասում է քաւոր աղուէսը ու վազ տալի:

Վազ է տալի վազ, տեսնում է՝ մի դաշտում մեծ նախիր է արածում:


— Էս ո՞ւմ նախիրն է:

Ասում են.— Շահ-Մարինը:

— Պա՛. Շահ-Մարի անունը էլ չտաք, Թագաւորը նրա վերայ բարկացել է, զօրքով իմ ետեւից գալիս է. ով նրա անունը տուա՛ւ՝ գլուխը կտրել կտայ: Որ հարցնի թէ ումն է, ասէք Չախչախ Թագաւորինը. թէ չէ՝ վայն եկել է ձեզ տարել:

Վազ է տալի վազ. տեսնում է՝ ոչխարի հօտը սարերը բռնել է:

— Էս ո՞ւմն է:



—Շահ-Մարինը:

Հովիւներին էլ նոյնն է ասում:

Վազ է տալի վազ. տեսնում է՝ ընդարձակ արտեր, հնձուր-  
ները միջին հնձում են:

— Էս ո՛ւմ արտերն են:

— Շահ-Մարինը:

Հնձուրներին էլ նոյնն է պատուիրում:

Վազ է տալի վազ. տեսնում է խոտհարքներ:

— Էս ումն են:

— Շահ-Մարինը:

Խոտ հարողներին էլ նոյնն է ասում:

Հասնում է Շահ-Մարի պալատին:

— Շահ-Մար, ա Շահ-Մար, — տեսնում ես էն փոշին, որ  
ամպի նման բարձրանում է: Էն թագաւորն է գալիս մեծ զօրքովն:  
Քու տունը չքանդւի, միամիտ նստել ես: Թագաւորը քեզ վրայ  
բարկացել է, մեծ զօրքով գալիս է, որ քեզ սպանի, տուն ու  
տեղը քանդի, տակն ու վրայ անի, ունեցած-չունեցածդ էլ թա-  
գաւորական դրի: Մի անգամ քեզ մօտ մի վառիկ եմ կերել, էն  
աղուհացը դեռ չեմ մոռացել: Վազեցի, եկայ, որ քեզ իմացնեմ:  
Շուտ արա, գլխիդ ճարը տես, քանի չի եկել:

— Ի՛նչ անեմ, ո՛ւր գնամ, — հարցնում է սարսափած Շահ-  
Մարը. տեսնում է, ճշմարիտ որ հեռւից փոշի բարձրացնելով պա-  
լիս է թագաւորը:

— Էլ ուր պէտք է գնաս, շուտ արա, մտի էս դէղի մէջ,  
թէ չէ եկան...

Էս Շահ-Մարը մտնում է դէղի մէջ:

Այն ինչ աղուէսի ետեւից գալիս են հարսանքաւորները:  
Գալիս են զուռնով, թմբուկով, երգով, զօրքով, հրացան արձա-  
կելով ու աղմուկով:

Գալիս են Չախչախ թագաւորն ու իր կինը ոսկեզօծ կառ-  
քի մէջ, նրանց առջեւից ու յետեւից անհամար ձիաւորներ:

Հասնում են մի դաշտի: Տեսնում են մեծ նախիր է արա-  
ծում:

— Էս ո՛ւմ նախիրն է, հարցնում են ձիաւորները:

— Չախչախ թագաւորինը, — պատասխանում են նախրա-  
պանները:

Անց են կենում: Հասնում են սարերին: Տեսնում են ոչ-  
խարի սպիտակ հօտը սարերը բռնել է:

— Էս ո՞ւմն է, — հարցնում են ձիաւորները։  
 — Չախչախ թագաւորինը, — պատասխանում են հովիւ-  
 ները։ Անց են կենում։ Ընդարձակ արտեր։  
 — Էս ո՞ւմ արտերն են։  
 — Չախչախ թագաւորինը։  
 Հասնում են խոտհարքներին։  
 — Էս ո՞ւմն են։  
 — Չախչախ թագաւորինը։  
 Ամէնքը մնացել են զարմացած. Չախչախ թագաւորն  
 ինքն էլ քիչ է մնում խելքը թռցնի։  
 Էսպէսով գալիս են, հասնում Շահ-Մարի պալատներին։  
 Քաւոր աղուէսն ընդունում է խնամիններին ու նորից սկը-  
 ւում են քէֆը։  
 Եօթն օր, եօթ գիշեր էլ էստեղ են քէֆ անում ու խնա-  
 միները վերադառնում են իրենց տեղերը։  
 Չախչախ թագաւորը, իր կինն ու քաւոր աղուէսը ապ-  
 րում են Շահ-Մարի պալատներում։  
 Իսկ թագաւորից վախեցած Շահ-Մարը մինչև էսօր էլ դեռ  
 գնում է։

1906



## Մ Ա Յ Ր Ը

Մի գարնան իրիկուն դռանը նստած զրոյց էինք անում, երբ  
 այս գէպը պատահեց։ Էս դէպքից յետոյ ես չեմ մոռանում էն  
 գարնան իրիկունը։

Ծիծեռնակը բոյն էր շինել մեր սրահի ոճորքում։ Ամէն տա-

մի աշնանը գնում էր, գարնանը ետ գալի, ու նրա բունը միշտ կպած էր մեր սրահի ոճորքին:

Եւ գարուն էր բացւում, եւ մեր սրտերն էին բացւում, հէնց որ նա իր զուարթ ճիշով յայտնւում էր մեր գիւղում ու մեր կըտուրի տակ:

Եւ ինչ քաղցր էր, երբ առաւօտները նա ծլվլում էր մեր երգիքին, կամ երբ իրիկնապահներին իր ընկերների հետ շարւում էին մի երկար ձողի վրայ ու «կարդում իրիկնաժամը»:

Եւ ահա նորից գարնան ետ վերադարձել էր իր բունը: Զուր էր անել, ճուտ էր հանել, ու ամբողջ օրը ուրախ ճչալով թռչում, կերակուր էր բերում իր ճուտներին:

Էն իրիկունն էլ, որ ասում եմ, եկաւ, կտցումը կերակուր բերաւ ճուտերի համար: Ընկուցները ճեճալով բնից դուրս հանեցին դեղին կտուցները:

Էդ ժամանակ, ինչպէս եղաւ, նրանցից մինը, գուցէ ամենից անագոյշ կամ ամենից սովածը, շտապեց, աւելի դուրս ձգեց բընից ու ընկաւ ներքեւ:

Մայրը ճչաց ու ցած թռաւ ճուտի ետեւից: Բայց հէնց էդ վայրկեանին, որտեղից որ էր, դուրս պրծաւ մեր կատուն, վեր թռցրեց փոքրիկ ճուտը:

— Փիշտ, փիշտ, — վեր թռանք ամէնքս, իսկ ծիծեռնակը սուր ծղրտալով ընկաւ կատուի ետեւից՝ նրա շուրջը թրթռալով ու կտցահարելով, բայց չեղաւ: Կատուն փախաւ մտաւ ամբարի տակը: Եւ այս ամէնն այնպէս արագ կատարեց, որ անկարելի էր մի բան անել:

Ծիծեռնակը դեռ ծղրտալով պտտում էր ամբարի շուրջը, իսկ մենք, երեխաներս, մի մի փայտ առած պտտում էինք ամբարի տակը, մինչև կատուն դուրս եկաւ ու փախաւ դէպի մարագը, դունչը լիզելով:

Ծիծեռնակը դատարկ կատուին որ տեսաւ, մի զիւ ծղրտաց ու թռաւ, իջաւ դիմացի ծառի ճիւղին: Այնտեղ լուռ վեր եկաւ: Մին էլ անսանք, յանկարծ ցած ընկաւ մի քարի կտորի նման: Վաղեցիք, տեսանք՝ մեռած ընկած է ծառի տակին:

Մի գարնան իրիկուն էր, որ այդ դէպքը պատահեց: Շատ տարիներ են անցել, բայց ես չեմ մոռանում այն գարնան իրիկունը, երբ ես առաջին անգամ իմացայ, որ ծիծեռնակի մայրն էլ մայր է ու սիրտն էլ սիրտ է, ինչպէս մերը:

# ԲԱՐԵԿԵՆԴԱՆԸ

Ժամանակով մի մարդ ու մի կին են լինում:

էս մարդ ու կնիկը իրար հաւանելիս չեն լինում:

Մարդը կնկան է ասում յիմար, կնիկը մարդուն, ու միշտ կուռելիս են լինում:

Մի օր մարդը մի քանի փութ եղ ու բրինձ է առնում, տալիս մշակի շալուկը, տանում տուն:

Կնիկը բարեկանում է.

— Ա՛յ, որ ասում են յիմար ես, չես հաւատում, էսքան եղն ու բրինձը միանգամից ինչի՞ համար ես առել բերել. հօրդ քէլէխն ես տալիս, թէ տղիդ հարսանիքն ես անում:

— Ի՞նչ քէլէխ, ի՞նչ հարսանիք, ա՛յ կնիկ, ի՞նչ ես խօսում, տար պահի, բարեկենդանի համար է:

Կնիկը հանգստանում է, տանում է պահում:

Անց է կենում մի առժամանակ, էս կնիկը օպասում է, սպասում է, բարեկենդանը գալիս չի: Մի օր էլ չէմքումը նստած է լինում, տեսնում է մի մարդ վռազ-վռազ փողոցով անց է կենում: Ձէռը դնում է ճակատին ու ձէն տալի.

— Ա՛խպէր, ա՛խպէր, հալա մի կանգնի:

Տղէն կանգնում է:

— Ա՛խպէր, բարեկենդանը դու հո չե՞ս:

Անցւորականը նկատում է, որ էս կնկայ ծալը պակաս է, ասում է՝ հա՛, ասեմ, տեսնեմ ինչ է դուրս գալի:

— Հա, ես եմ բարեկենդանը, բոյրիկ ջան, ի՞նչ ես ասում:

— Էն եմ ասում, որ մենք քո ծպռան հո չենք, որ քո եղն ու բրինձը պահենք: Ինչ որ պահեցինք, հերիք չէ՞ր... չե՞ս ամաչում... Ընչի՞ չես գալի քո ապրանքը տանում...:

— Դէ էլ ի՞նչ ես նեղանում, քոյրիկ ջան, ես էլ հէնց դրա համար եմ եկել, ձեր տունն էի ման գալի, չէի գտնում:

— Դէ արի տար:

էս մարդը ներս է մտնում, սրանց եղն ու բրինձը շալակում ու կրունկը դէսն է անում, երեսը դէպի իրենց գիւղը:

Մարդը գալիս է տուն, կնիկն ասում է .

— Հա՛, էն բարեկենդանն եկաւ, իր բաները իրեն սեցրի տարաւ :

— Ի՞նչ բարեկենդան... Ի՞նչ բաներ...

— Այ՛ էն եղն ու բրինձը... Մին էլ տեսնեմ՝ վերելից գալիս է. մեր տուն էր ման գալի. կանչեցի, մի լաւ էլ խայտառակ արի, շալակը տւի տարաւ :

— Վայ քու անխելք տունը՝ քանդւի, որ ասում եմ յիմար ես—յիմար ես էլի... Ո՞ր կողմը գնաց :

— Այ՛ էն կողմը :

Էս մարդը ձի է նստում, ընկնում բարեկենդանի ետեւից, ձանապարհին բարեկենդանը ետ է մտիկ անում, տեսնում է՝ մի ձիաւոր քշած գալիս է : Գլխի է ընկնում, որ սա էն կնկայ մարդը պէտք է լինի :

Գալիս է հասնում իրեն :

— Բարի օր ախպերացու :

— Աստծու բարին :

— Հո էս ճամբովը մարդ չի անց կացաւ :

— Անց կացաւ :

— Ի՞նչ ունէր շալակին :

— Եղ ու բրինձ :

— Հա, հէնց էդ եմ ասում : Ի՞նչքան ժամանակ կլինի :

— Բաւական ժամանակ կլինի :

— Որ ձին քշեմ՝ կհասնե՞մ :

— Ո՞րտեղից կհասնես, դու ձիով, նա ոտով : Մինչև քո ձին չորս ոտը կփոխի— մի՛ն, երկո՛ւ, երե՛ք, չո՛րս — նա երկու ոտով մէ՛կ-երկո՛ւ, մէ՛կ-երկո՛ւ, մէ՛կ-երկու, շուտ շուտ կգնայ, անց կկենայ :

— Բա ի՞նչպէս անեմ :

— Ինչպէս պէտք է անես. ուզում ես, ձիդ թող ինձ մօտ, դու էլ նրա պէս ոտով վազի, գուցէ հասնես :

— Հա՛, էդ լաւ ես ասում :

Վեր է գալիս, ձին թողնում սրա մօտ ու ոտով ճանապարհ ընկնում : Սա հեռանում է թէ՛ չէ, բարեկենդանը շալակը բարձում է ձիուն, ճամբէն ծռում, քշում :

Էս մարդը ոտով գնում է, գնում է, տեսնում է չհասաւ, ետ է դառնում : Ետ է դառնում տեսնում՝ ձին էլ չկայ : Գալիս է տուն : Նորից սկսում են կռել, մարդը եղ ու բրինձի համար, կնիկը ձիու :

Մինչև օրս էլ մարդ ու կնիկը կռւում են դեռ, Սա նրան է ասում յիմար, նա սրան, իսկ բարեկենդանը լսում է ու ծիծաղում :

# ԳԵՂԵՑԿՈՒՀԻ ՎԱՍԻԼԻՍԱՆ

( Դ Ո Ւ Ս Ա Կ Ա Ն )

Լինում է չի լինում մի վաճառական. տասներկու տարեայ պսակած է լինում, ունենում է միայն մի աղջիկ, անունը Գեղեցկուհի Վասիլիսա: Վասիլիսայի ութ տարին լրացած — մէրը մեռնում է: Մեռնելիս աղջկանը կանչում է, ասում է.

— Լսի՛ր, Վասիլիսա, միտդ պահիր ու կատարիր իմ վերջին խօսքը: Ահա ես մեռնում եմ ու իմ մայրական օրհնութեան հետ ես տիկնիկն եմ թողնում քեզ: Միշտ մօտդ ու հետդ կպահես էս տիկնիկը, ոչ ոքի ցոյց չես տալ, իսկ մի ցաւ կամ վիշտ ունեցած ժամանակդ կերակուր կտաս իրեն, կկերակրես ու խորհուրդ կհարցնես: Կուտի ու քեզ կասի թէ ինչ ճար ու հնար ունես քո ցաւին:

Ասում է, աղջկանը համբուրում ու մեռնում:

Կնոջ մահից յետոյ, ինչպես սովորութիւն է, վաճառականը սուգ է պահում, յետոյ սկսում է մտածել, որ նորից ամուսնանայ: Ու ամուսնանում է մի այրի կնոջ հետ: Էս այրին էլ ինքը հասակն առած կին է լինում, համարեա թէ Վասիլիսային հասակակից էլ երկու աղջիկ է ունենում:

Վասիլիսան իրենց տեղի առաջին գեղեցկուհին է լինում: Խորթ մէրն ու իր աղջիկները նախանձում են նրա գեղեցկութեան վրայ ու շատ բանի դնելով չարչարում են, որ աշխատանքից նիհարի: արեւից ու քամուց սեւանայ: Մի խօսքով՝ օր չեն տալի:

Վասիլիսան էս ամէնը տանում է անտրտունջ ու, ընդհակառակը, օրն օրի վրայ լցւում, լաւանում է. այն ինչ խորթ մէրն ու իր աղջիկները իրենց ներսի չարութիւնից հալւում են, մաշւում ու նիհարում, թէև ամբողջ օրը ձեռները ծալած, աղջիկպարօնների նման տանը նստած են լինում:

Ոչ ոք էլ չի իմանում սրա գաղտնիքը: Չեն իմանում, թէ էս բոլորը Վասիլիսայի մօր թողած տիկնիկն է անում:

Բաժին կտային, Վասիլիսան ամենալաւ պատառը կպահէր իր տիկնիկի համար: Իրիկունը երբ ամէնքը կպառկէին քնելու, նա իր նկուղում կփսկէր ու տիկնիկի հետ կխօսէր:

— Տիկնիկ ջան, ա՛ռ, տնուշ արա,  
իմ սև դարդին ականջ արա:  
Հօրս օջախումը ապրում եմ ես  
Միշտ անխնդում ու լուռ էսպէս:  
Իմ խորթ մէրը խաթուն-խանում—  
ինձ աշխարհքից դուրս է անում:  
Ասա՛, հոգի՛ս, էս ցաւի դէմ  
Ես ի՞նչ անեմ, ես ո՞նց անեմ:

Տիկնիկը կ'ուտէր, խորհուրդներ կտար, կը մխիթարէր, առաւօտն էլ նրա բան ու գործն էլ ինք կանէր: Վասիլիսան իրեն համար դէնջ ու հանգիստ կնոսէր ծառերի շվաքնորում, ծաղիկ-կփաղէր, ու մին էլ չն կտեսնէր, որ իր մարգերը քաղհանած են, բանջարեղէնը ջրած, ջուրը բերած, կրակը արած:

Էսպէս մի քանի տարի անց է կենում: Վասիլիսան մեծանում է, հասնում. դառնում հարսնացու: Ամէն կողմից փեսացուները խնամախօսներ են զրկում նրան ուզելու, իսկ խորթ մօր աղջիկներին հարցնող չկայ: Չար կինը աւելի է կատաղում ու բոլոր եկողներին մի բերան են պատասխանում, թէ մեծերից առաջ փոքրին չեն կարող մարդու տալ: Խնամախօսներին էսպէս ճամբու է դնում ու բռնում Վասիլիսային ծեծում, ջարդում, ջիգրը նրանից է հանում:

Մի անգամ էլ էս վաճառականը առեւտրական գործերով ուրիշ աշխարհ է գնում: Խորթ մէրն ուրիշ տուն է փոխում:

Իսկ էս նոր տան կողքին մի մուխ անտառ է լինում, էն անտառում էլ քնակակիտ է լինում մի կախարդ պառաւ, որ ոչ ոքի մօտ չի թողնում, մարդկանց էնպէս է ուտում, ոնց որ հաւի ճուտեր: Խորթ մէրը ամէն մի դատարկ բանի համար շարունակ անտառն է զրկում իր աչքի փուշ Վասիլիսային, թէ ինչ է՝ կախարդի ճանկն ընկնի: Բայց տիկնիկը Վասիլիսային ճամբայ է սովորեցնում, չի թողնում կախարդի որջին մօտենայ, ու ամէն անգամ էլ Վասիլիսան ողջ առողջ վերադառնում է տուն:

Էսպէսով հասնում են աշունքը: Մի աշունքւայ իրիկուն մէրը երեք աղջկայ ձեռքն էլ գործ է տալի — էն էլ դաս: Մինը պէտք էր մանեակ գործէր, միւսը գուլպայ անէր, Վասիլիսան էլ պէտք է մանէր: Էս կախարդը տան բոլոր ճրագները հագցնում է, մենակ մի մօմ է թողնում վառած ու ինքը պառկում է քնի:

Աղջիկները բանում են: Բանելու ժամանակ որ մօմի պատրոյգն էրում է, խորթ մօր աղջիկներից մինը մաղաչն առնում է իբրեւ թէ մօմի քիթը կտրի, ուղղի: Ուղղելու փոխարէն, իբրեւ

Թէ յանկարծ, լոյսը հանգցնում է: Դու մի՛ ասիլ՝ մէրն է սողորեցնել, որ էղպէս անի:

— Հիմի ի՞նչ անենք,— ասում են աղջիկները:— Լոյս չըկայ. դասներս էլ կիսատ են:

— Ի՞նչ պէտք է անենք, պէտք է մինս ու մինս գնանք կախարդ պառաւից կրակ բերենք:

— Ինձ իմ ձեռի ասեղներն էլ են լոյս տալիս. կրակն ի՞նչ եմ անում. ինչ ուզում է լինի, ես չեմ գնալ,— ասում է մանեակ գործող աղջիկը ու տեղը պինդ նստում:

— Ես էլ չեմ գնալ,— էն կողմից վրայ է բերում միւս քոյրը, որ գուլպայ էր գործում,— ինձ իմ միւլերի լուսն էլ է բաւական:

— Դէ՛ վեր կաց դու գնա,— միաձայն կանչում են յերկուսն էլ ու դուրս են հրում վասիլիսային: Գնա՛ կախարդ պառաւից կրակ առ բեր:

Վասիլիսան վեր է կենում գնում իր նկուղը, պահած ընթրիքը գնում է տիկնիկի առջ ու ասում.

— Տիկնիկ ջա՛ն, ա՛ռ, անուշ արա,  
Իմ սև դարդին ա՛կանջ արա:  
Ինձ ղրկում են կրակ բերեմ չար պառաւից,  
Չար պառաւը կուտի հո ինձ...  
Ասա, հոգի՛ս, էս ցաւի դէմ  
Ես ի՞նչ անեմ, ես ո՞նց անում:

Տիկնիկը որ ուտում է պրծնում, աչքերը ջուխտ մոմի պէս վառւում են, ասում է.

— Մի՛ վախենար, Վասիլիսա. ուր որ ղրկում են— գնա՛, միայն թէ ինձ հետդ պահիր: Ես որ հետդ լինեմ, պառաւը քեզ բան չի անի:

Վասիլիսան վեր է կենում, տիկնիկը գրպանն է դնում ու ճամբայ ընկնում դէպի մութն անտառը: Գնում է, բայց ոչ մեռած է, ոչ կենդանի. հետը գնում է, հետը դողում: Մին էլ էն է տեսնում՝ մի սպիտակ ձիաւոր ցոլաց ու անցաւ. ինքը սպիտակ, հագինը սպիտակ, ձիու սարքը սպիտակ, ու սկսեց ծեքել:

Մի քիչ էլ գնում է, տեսնում՝ հիմի էլ մի կարմիր ձիաւոր անցաւ, ինքը կարմիր, հագինը կարմիր, ապինը կարմիր, էստեղ էլ արեւը բացւեց...

Օր ու գիշեր գնում է Վասիլիսան, մին էլ միւս օրուայ իրիկունը դուրս է գալիս էն բացատը, որտեղ կանգնած է լի-

նում կախարդ պառաւի խրճիթը: Խրճիթի չորս կողմի ցանկապատը մարդկային ոսկորներից և էստեղ-էնտեղ վրէն ցից հանած մարդկային գանկեր: Դարպասի սիւնների փոխարէն մարդկային ոտներ, — փակիչի տեղը — ձեռներ, կողպէքի տեղակ — ատամները վրէն ծնոտներ:

Սարսափից մարում է վասիլիսան ու տեղն ու տեղը քարանում մնում: Եւ ահա դարձեալ մի ձիաւոր. ինքը սև, հագինը սև, տակինը սև: Քչած գալիս է ու կախարդի դռանը չքւում, տեղն ու տեղը անհետանում: Ու վրայ է հասնում գիշերը: Բայց ցանկապատի վրայ ցից հանած գանկերի աչքերը լոյս են տալի մթնում, ու բացատն այնպէս է լուսաւորւում որ թէ ցերեկ լինէր: Վասիլիսան ահից ու սարսափից դողում է, բայց չի իմանում որ կողմը փախչի, մնում է մեխւած:

Յանկարծ անտառից մի զարհուրելի աղմուկ է տարածւում. ծառերը ճռճուում են, խաչամբ խշխշում է. դու մի՛ առի՛ կա. խարդ պառաւն է, անտառից դուրս է գալիս:

Գալիս է սանդի մէջ մտած: Թակով թակելով, ջարդելով ու հալածելով, աւելով հետքը սրբելով: Գալիս է դռանը կանգնում, չորս կողմի վրայ հոտոտում ու իրեն-իրեն վրռւում.

— Թո՛ւ, թո՛ւ, թո՛ւ, մարդ-մարդահոտ է գալիս... ո՞վ կայ էստեղ...

Վասիլիսան էն կողմից ահ ու դողով մօտենում է, խորը գլուխ է տալիս ու ասում.

— Ես եմ, նա՛նի ջան, իմ խորթ մօր աղջիկներն ինձ ղըրկել են քեզ մօտ կրակի:

— Կա՛ւ, լա՛ւ, — ասում է կախարդը, — ճանաչում եմ ինչ պտուղներ են: Դէ ինձ մօտ կացի ու աշխատի: Որ ինձ մօտ կենաս ու աշխատես. կրակ կտամ տանես նրանց համար, թէ չէ — քեզ էլ կուտեմ:

Յետոյ դառնում է իր դարպասին ու ճչում.

— Հէ՛յ բացեցէ՛ք, ամուր փակեր, ետ գնացէ՛ք, լէն դարպասներ...

Դռները իսկոյն բացւում են: Կախարդը սուլելով ներս է մտնում, Վասիլիսան էլ յետեւից, ու բոլորը նորից փակւում են: Ներս են մտնում թէ չէ, կախարդ պառաւը իր թախտի վրայ ձգւում է ու Վասիլիսային ասում.

— Հապա մի էստեղ բեր կրակի կողքին ինչ որ կայ, սոված եմ, ուզում եմ հաց ուտեմ:

Վասիլիսան ցանկապատի վրայի գանկերից մարիսը վառում է ու իրար յետեւից բերում ուտելիքները պառաւի առաջը շա-

րում: Ուտելիքն էլ էնքան է լինում, որ տասը հոգի ուտէին—հերիք կանէր: Ներքնատնից էլ գինի-արաղ է բերում, ու պառաւը նստում է ընթրիքի: Բոլորն ուտում է խմում, վասիլիսային թերմացքից մի քիչ բան է թողնում ու վռչալով պառկում է քնի: Քնելուց առաջ գլուխը վեր է քաշում վասիլիսային ասում:

— Լա՛ւ մտիկ արա հա՛, առաւօտը որ ես կ'երթամ—դուռը կսրբես, խրճիթը կաւլես, ճաշը կեփես, լուացքը կանես, յետոյ կ'երթաս հորից մի թաղար ցորեն կհանես, կընտրես, սև տրիճը կջոկես: Միայն թէ տե՛ս, ամէն բան արած լինի էնպէս, ինչպէս ասում եմ, թէ չէ— քեզ կուտեմ:

Պատուիրում է ու քնում: Վասիլիսան պառաւի թերմացքը տանում դնում է իր տիկնիկի առջև, հետն արտասուք է թափում, հեաը տսում:

— Կե՛ր տի՛կնիկ ջան, ա՛նուշ արա,  
Իմ սև դարձին ա՛կանջ արա:  
Չար պառաւն իմ ուժից վեր  
Տուել է ինձ ծանր գործեր.  
Անեմ—էնքան էլ ուժ չունեմ,  
Չանեմ— կուտի, ես ի՛նչ անեմ...

Տիկնիկը պատասխանում է.

— Մի՛ վախենար, սիրուն վասիլիսա: Հաց կե՛ր, աղօթի՛ր ու քնի՛ր: Լուսը կգայ բարին հետը:

Առաւօտը ծէգին զարթնում է վասիլիսան, տեսնում է պառաւն արգէն վէր է կացել, լուսամուտից դուրս է նայում, ու գանկերի աչքերը հեռզնեւէ մարում են: Ահա ցոլաց և սպիտակ ձիաւորն ու լուսը բացւեց: Պառաւը դուրս ելաւ, սուլեց, յայտնըւեցին սանդը, թակն ու ոտնաւելը, ցոլաց կորմիր ձիաւորը — արեւը ծագեց: Ու պառաւը մտաւ սանդի մէջ, թաւ դնաց, թակով թակելով, ջարդելով, փշրելով ու քշելով, ոտնաւելով հետքը սրբելով ու աւելով:

Վասիլիսան էլ ետ մնում է մենակ: Ման է գալիս պառաւի տունը, աչք է ածում ամէն անկիւն ու մնում է զորմացած ամէն բանի լիութեան վրայ: Ապա սկսում է միտք անել, թէ ի՛նչպէս անի, որ պառաւի պատուէրը կատարի: Մին էլ տեսնում է ամէն բան կատարած, պատրաստ, ու տիկնիկը ցորենի միջի վերջին տեքսիփուկներն է ջոկում:

— Քեզ միայն էն է մնում, որ կերակուրն եփես, Վա'սիլիսա, ասում է տիկնիկն ու մտնում գրպանը:

Իրիկնադէմին Վասիլիսան սեղանը բաց է անում ու սպասում պառաւին: Ակտում է մթնաժողով: Դարպասի առջև սեւին է տալիս սև ձիաւորն ու ականակիր մութը կոխում է գետինը: Միայն գանկերի աչքերն են, որ վառւում են խաւարում:

Ապա անտառն սկսում է ճռճուլ ու խաչամը խշխշալ.— պառաւը գալիս է: Վասիլիսան դուրս է գալի դէմը:

— Հը՛, ամէն բան պատրաստ է, թէ չէ:

— Պատրաստ է նա'նի ջան, արի՛ քո աչքովը տես,— պատասխանում է Վասիլիսան:

Պառաւը ներս է մտնում տեսնում է ամէն բան պատրաստ ու կատաղում է, որ բարկանալու բան չկայ: Ասում է.

— Դէ՛ լա՛ւ,— ու ճչում է,— իմ ընկերնե՛ր, իմ աջ ձեռնե՛ր, եկէ՛ք, տարէ՛ք իմ աղունն աղացէ՛ք:

Էս ձէնի վրայ երեք ջուխտ ձեռքեր են յայտնւում, ցցրենն առնում են տանում:

Պառաւն ուտում է կշտանում, սկսում է պառկել ու Վասիլիսային նոր հրամաններ է տալիս. ասում է.

— Էգուց էլ էր կանես, ինչ որ էսօր արել էիր, ու բացի դրան հորիցը մի թաղար խաշխաշի սերմը կհանես ու հողը կջոկես հատիկ-հատիկ: Չեմ իմանում, թէ ո՛վ է հողն ու խաշն իրար խառնել:

Ասում է, երեսը պատին անում ու խռմփացնում:

Վասիլիսան գնում է դարձեալ տիկնիկին ուտեցնում ու հարցնում:

— Աղօթի՛ր ու քնիր, Վա'սիլիսա,—պատասխանում է տիկնիկը, լուս կգայ՝ բարին հետը: Ամէն բան պատրաստ կը լինի վաղը:

Առաւօտն էլ ետ իր սանդն է մտնում պառաւն ու գնում, իսկ Վասիլիսան իր տիկնիկի հետ ամէն բան անում են վերջացնում: Պառաւն երիկունը վերադառնում է, մտիկ է տալիս ու կանչում.

— Իմ ա'ջ ձեռներ, իմ ընկերնե՛ր, եկէ՛ք տարէ՛ք, խաշխաշից իւղ հանեցէ՛ք ինձ համար:

Իսկոյն յայտնւում են երեք ջուխտ ձեռներ, խաշխաշն առնում են տանում:

Ապա պառաւը ընթրիքի է նստում, իսկ Վասիլիսան լուս կանգնած է առաջին:

— Ինչո՞ւ չես խօսում, — հարցնում է Կախարդը, — էնպէս լուռ ու մուռ կանգնել ես, կարծես թէ բերանումդ լեզու չկայ:

— Ձեմ համարձակում եմ խօսել, նա՛նի ջան, — պատասխանում է Վասիլիսան. — Իսկ եթէ դու հրաման ես տալի խօսելու, մի բան կհարցնեմ:

— Հարցրո՛ւ, միայն թէ իմացած եղիր — լաւ չի, որ ամէն բան իմանաս. շատ իմանաս — շուտ կը պառաւես:

— Ես էն էի ուզում քեզ հարցնեմ, նա՛նի ջան, ինչ որ աչքով տեսել եմ: Էստեղ գալիս ճամբին մի ձիաւոր ընկաւ աչքովս — ինքը սպիտակ, հագինը սպիտակ, տակինը սպիտակ. — էն ո՞վ է էն ձիաւորը, նա՛նի ջան:

— Էն իմ պայծառ օրն է, — պատասխանում է Կախարդը.

— Յետոյ տեսայ մի ուրիշ ձիաւոր, ինքը կարմիր, հագինը կարմիր, տակինը կարմիր. — էն ո՞վ է:

— Էն էլ իմ կարմիր արեւն է:

— Իսկ էն սե ձիաւորն ո՞վ է, որ քո դարպասի դռանը վերայ հասաւ. ինքը սե, հագինը սե, տակինը սե:

— Էն էլ իմ մութ գիշերն է. — Երեքն էլ իմ հաւատարիմ ծառաներն են:

Վասիլիսան էստեղ յիշում է երեք ջուխտ ձեռներն ու լըռում:

— Էլ ինչո՞ւ չես բան հարցնում:

— Էս էլ հերիք էր, նա՛նի ջան: Ձե՞ դու ինքդ ասիր՝ թէ որ շատ իմանամ, շուտ կը պառաւեմ:

— Լաւ ես անում՝ որ էն ես հարցնում՝ ինչ որ դուրսն ես տեսել, էն չես հարցնում, ինչ որ ներսն ես տեսել: Ես չեմ օրում, որ իմ տան աղբ ու կեղտը դուրս են հանում, ու շատ հետաքրքիրներին ուտում եմ: Դէ կա՛ց, հիմի էլ ես քեզ հարցմունք անեմ: Դու էդ ինչպէս ես կարողանում անել ու հասցնել էսքան գործը, որ ես քեզ յանձնարարում եմ:

— Իմ մօր օրհնանքն ինձ օգնում է, նա՛նի ջան, — պատասխանում է Վասիլիսան:

— Ո՛հնց թէ... դու օրհնած ես հա՛... Դէ էստեղից դու՛րս գնա կորիր դու, օրհնուած աղջիկ: Օրհնուածներն ինձ պէտք չեն էստեղ:

Ասում է ու խրճիթից դուրս քաշում, դարպասից դուրս հրում, ցանկապատի վրայ վառուող աչքերով գանկերից մին էլ մի ձողի ծէր է անց կացնում ձեռք տալի, թէ՛

— Էս էլ քեզ կրակ՝ քո խորթ մօր ու իր աղջիկների հա-

մար: 25<sup>օ</sup> որ նրանք քեզ կրակի են զրկել ինձ մօտ, որ իրենց համար կրակ տանես:

Ու վազում է Վասիլիսան, վազում է դէպի տուն: Ձեռքի գանկը ճամբին լուս է տալի մինչև ծէգը ու ծէգը հանգչում: Միև օրն իրիկունը վերջապէս տուն է հասնում: Որ հասնում է, ուզում է ձեռքի գանկը դէն գցի, մտքումն ասում է՝ մինչև հիմի երեւի արգէն կրակ կլինեն արած: Էս մտքի մէջ՝ մին էլ յանկարծ գանկից մի խուլ ձէն է գալի. «ինձ դէն մի՛ գցիլ, տար քո խորթ մօր մօտ»...

Տանն էլ մտիկ է տալիս, տեսնում է մութը, կրակ չի երեւում, գանկը հետը ներս է տանում:

Խորթ մէրն ու աղջիկները Վասիլիսային որ տեսնում են՝ սկզբում ուրախ հանդիպում են, պատմում են, թէ էն օրուանից, ինչ դու գնացել ես՝ մեր տանը կրակ չի վառուել: Մենք չենք կարողացել կրակ անել, հարեւաններից էլ ինչքան բերել ենք, տուն ենք հասցրել թէ չէ՝ հանգել է:

— Հիմի քո կրակը վառ կմնայ, ասում է խորթ մէրը:

Գանկը ներս են տանում՝ թէ չէ՝ աչքերն էնպէս են նայում խորթ մօրն ու իր աղջիկներին, որ էրում են, կրակում: Ուզում են թաքչեն, բայց ուր որ թաքչում են, աչքերը ամէն տեղ հետեւում ու նայում են նրանց, էրում, կրակում են նրանց:

Ու լուսադէմին խորթ մէրն ու աղջիկներն արգէն էրուել, ածուխ էին կտրել. միայն Վասիլիսային էր, որ ոչինչ չէր եղել:

Առաւօտը Վասիլիսան գանկը հողումը թաղում է, տան դուռն ամուր կողպում, ինքը գնում է քաղաք, մի անորդի պառաւի խնդրում է, որ մօտը կենայ, մինչև իր էն հէրը օտարութիւնից գայ: Պառաւը սիրով ընդունում է իր աղջկայ նման, Վասիլիսան էլ նրան սիրում պատւում է իր մօր պէս, մօտը ապրում է ու սպասում: Պարապութիւնից որ յոգնում է, մի օր էլ պառաւին ասում է.

— Էսպէս պարապ-սարապ նստելուց յոգնում եմ, նա՛նի ջան, ի՛նչ կլինի գնաս վուշ առնես բերես, մանած անեմ: Պառաւը գնում է, վուշ է առնում բերում, Վասիլիսան նստում է մանած անում, էնքան բարակ ու նուրբ, ոնց որ մազ: Մանածն անում է պրծնում, հիմի պէտք է գործել: Բայց էն տեսակ տորք չի գտնում, որ էն մանածին գայ, ոչով էլ չի կարողանում շինի: Վասիլիսան էլ յետոյ իր տիկնիկին է խնդրում,

Տիկնիկն ասում է.

— Գնա՛ ինձ համար մի հին տորք բեր ու մի մաքուր, մին էլ մի քիչ ձիու ձար, ես քեզ համար ամէն բան շինեմ:

Վասիլիսան գնում է գտնում ինչ որ հարկաւոր է, տալիս է տիկնիկին, ինքը քնում: Առաւօտը վեր է կենում, տեսնում՝ տիկնիկը մի հիանալի տորք է շինել:

Վասիլիսան կտաւը հինում է, նստում գործում ու ձմեռայ վերջը արդէն պատրաստ է լինում: Մի կտաւ, որ ասեղի ծակովն անց կկենար: Գարունքը կտաւը ճերմակցնում են, ու Վասիլիսան պառաւին ասում է.

— Նա՛նի ջան, տար էս կտաւը ծախի, փողը բեր — քեզ կը լինի:

Պառաւը կտաւին մտիկ է անում՝ մնում է բերանը բաց: Ասում է.

— Աղջիկ ջան, էս կտաւը թագաւորին վայել կտաւ է: Արի տանեմ պալատը՝ տեսնեմ:

Էս կտաւն առնում է պառաւը, գնում թագաւորի պալատի մօտերքը պտտւում: Թագաւորը նկատում է, որ մի պառաւ իր մօտերքը պտտւում է, ասում է.

— Ի՛նչ ես ուզում, ա՛յ նանի:

Պառաւը, թէ՛ թագաւորն ապրած կենայ, ես քեզ վայել մի էն տեսակ ապրանք եմ բերել, որ ուզում եմ դու տեսնես:

Թագաւորը հրամայում է պառաւին ներս բերեն: Պառաւին որ ներս են բերում, թագաւորը կտաւը տեսնում է՝ էստեղ էլ սրա բերանն է մնում բաց: Ասում է.

— Ի՛նչ է սրա գինը, ա՛յ նանի. թէ.— սրան գին չունի, թագաւորն ապրած կենայ, քեզ նուէր եմ բերել:

Թագաւորը շնորհակալութիւն է անում, ինք էլ իր կողմից պառաւին է նուէրներ տալիս ու արձակում:

Ուզում են էս կտաւիցը թագաւորի համար շապիկ կարեն, բերում են ձեւում, բայց էնպէս կարող չեն գտնում, որ կարի, Ման են գալիս ման, վերջը թագաւորն էլ ետ էն պառաւին է կանչում, թէ՛.

— Ա՛յ նանի, ո՞նց որ էս կտաւը գործել ես, էնպէս էլ պէտք է կարես, թէ չէ ուրիշ կարող չկայ:

Պառաւն ասում է.— Թագաւորն ապրած կենայ, ոչ ես եմ մանել ու գործել էս կտաւը, ոչ էլ ես կարող եմ կարել: Մի որդեգրուհի ունեմ տանը, էս նրա ձեռի գործն է:

— Լաւ, որդեգրուհիդ լինի: Տար տուր նրան թո՛ղ նա կարի:

Պառաւր Վերադառնում է տուն, Վասիլիսային պատմում  
ինչ որ պատահել էր:

— Ես էլ գիտէի, որ էս գործը վերջը ինձ էր հասնելու,—  
ասում է Վասիլիսան: Փակւում է իր սենեակում ու սկսում է կա-  
րել: Գիշեր-ցերեկ է անում, կարում պատրաստում, տալիս է պա-  
ռաւին, թէ՛ դէ տար տուր թագաւորին:

Պառաւր շապիկը առնում տանում է պալատը, տալիս թա-  
գաւորին, իսկ Վասիլիսան երեսը լուանում է, գլուխը սանտրում,  
հագնւում, զուգւում, նստում լուսամուտի առաջն ու սպասում:  
Սպասում է թէ տեսնի ինչ պէտք է լինի:

Մին էլ էն է տեսնում, որ թագաւորի մարդիկ գալիս են  
դէպի պառաւի տունը: Գալիս են ներս են մտնում ու յայտնում,  
թէ ով է կարել թագաւորի շապիկը, թագաւորն ուզում է նրան  
տեսնի ու ինքը իր ձեռով վարձատրի:

Վասիլիսան վեր է կենում գնում, թագաւորի առաջին  
կանգնում: Թագաւորի տեսնելն ու սիրահարուելը մին է լինում:

— Ես էլ քեզանից ձեռը քաշողը չեմ, սիրուն Վասիլիսա,—  
ասում է թագաւորը:— Էսօրուանից դու իմն ես, ես էլ քոնը, է-  
սօրուանից իմ կեանքի ընկերն ու իմ աշխարհքի թագուհին ես  
դու...:

Ասում է, ձեռիցը բռնում, բարձրացնում, նստեցնում է իր  
կողքին, ու սկսում է հարսանիքը: Վասիլիսայի հէրն էլ վրայ է  
հասնում, աղջկայ բախտաւորութիւնը որ տեսնում է՝ ուրախա-  
նում, աշխարհքովը մին է լինում, ու էն մնալն է, որ մնում է  
աղջկայ մօտ: Իր մայրացեղ պառաւին էլ չի մոռանում Վասիլի-  
սան, բերում է պալատ, պահում է իրեն մօտ, իսկ տիկնիկից չի  
բաժանւում մինչև մահը ու միշտ, ամէն տեղ պահում է իր գըր-  
պանում:

( 1913 )

Գիտան  
Արտակ Ալպոյանեանի  
Գանձիք — Երասխա



— Զենք կարող նրեակալել, կը գրէ «Յուսաբեր» իր 13/6/46ի խմբագրականով. որ եւ է հայ կուսակցութիւն եւ գիտակից ազգային մը, որ դէմ ըլլայ ներգաղթին: Ներքին վէճի, պայմարի նիւթ դառնել ներգաղթը՝ կը նշանակէ «զիտ» եւ լեցնել բռնադատի քրտազգիքն:

— Հայկ. Բարեգ. Ընդհ. Միութեան Սիւրիոյ եւ Լիբանանի Կրթական Քննիչ պ. Միշաէլ Նաթանեան, Մայիս 28ը առիթ ծառայեցնելով, բունքս եւ պառակտիչ յօդուած մը գրած է: Տարիք առած այս պարմը չի մտածէր որ Բարեգործականի մէջ ունեցած իր պատճօնը *Իրաւունք չի տար Երեւն*՝ հաստատական կիրքերու ծառայելու: Զ.Ռ.Ը.Մ.ի վերին մարմիններուն ուժադրութեանը կը յանձնենք աւսիկա:

— Համեստ հայ մը՝ Սիսակ Շալեան, Ադիսաբեյի «Արաբ» շաբաթաբերին մէջ կը ստորագրէ բողոքներ, երբեմն անօրինակ կործակով եւ քաղաքամբ: Վերջերս ան ծառայող «սեկցիա» բառը բնութագրող գաղութանայեան դէմ. Հաւաքականութեան յիշեցուց Մայիս 28ի նախնականութիւնը. վարմաններուն ուժադրութեան յանձնեց Նոյ. 29ի բերած խաղաղութիւնն ու բարգաւաճումը. եւ ջանադրեց ներգաղթը: Ան փեղէն փառք «Տաղար»-ն սգէ պատճառով, որ իր բեմէն «սնոսի» կոչեր է Հայաստանայց եկեղեցիին ծէսերը: (Ինչպէս բեմ կը հանուին այդպիսի մարդիկ) Ապրիլ Շալեան:

— Զ. Կ. եւ Զ. Համազգային ընկերութիւնը, որ փայլուն գործունէութիւն զոյց տուաւ վերջին տարիներուն, ձեռնարկած է «Հայկ. Հեռարձակ»-ու հաւաքածոյի մը հրատարակութեան:

— Հայ գիրքի Բարեկամներու Ընկերակցութիւնը 15/6/46ին տուաւ առուիւս մը Զ. Կ. Միութեան տրամիւն մէջ: Նիւթ՝ Ս. Զօրեանի «Պապ Բաղդատ»ը: Զեկուցող՝ Ո. Զաւարի: Ներկայ էին Բիչ Բիւրով ունկնդիրներ, ներուներէն եկած ուսուցիչներ եւ երէց մտաւորականներ: Քիչ էր թիւը երեսաստուգներուն: Զկային գրականութեան եւ հայրենիքի անունով երգող ընկող ներմակ-կուցները...

— Կ'իմանամք թէ շուտով հրատարակ պիտի դուրս երթն ընկերակցութեան նոր հրատարակութիւնը՝ «Մեծեցիւր Ո. Արփարեանէ, Թ. Զաւարեանէ եւ Զ. Ասատուրէ»:

— Ասերն անգամ մը, անհրաժեշտ արարածներ, արձակով եւ ռաւանաւորով, կը փախչեն մեր հրատարակութիւններէ: Արեւ. քերթին մէջ: Թերթին խմբագիրներուն հետ մեր անձնակազմ քարեկամութիւնը կը պարտադրէ մեզ ըլլալ ներքոյ ու սեմին կապուած արարածներու անունին վրայ չաւելցնել «երկու աւ»եր: Բայց խորհուրդ պիտի տանք անոնց՝ որեւէ բան փախչելէ առաջ իրենց դէմքն ու գանկին ձեւը դիտել անգամ մը հայելիին մէջ:

— «Հայրենի Գրականութիւն» շաբթիկն ք. պրակը նուիրուած պիտի ըլլայ Շիրվանզադէին:

ԳՍՍ Զինարար Գիտ. Գրադ.



FL0596230

# ՄԵՐ ՔՈՎ ԿԸ ՎԱՃԱՌՈՒԻՆ

(Փաստի ծախքը գնողին վրայ)

|                                    | Ե. Դ.               |
|------------------------------------|---------------------|
| Հէ՛յ ջան Երեւան (քերթուած)         | Ա. Մառուկեան 20     |
| Յեղափոխական դէմքեր                 | Գ. Լադեան 60        |
| Սայաթ-Նովա                         | ՀՄ. Շէմս 100        |
| Ռոջնական                           | » » 50              |
| Կանանչ Հովիտէն                     | Յ. Արամեան 25       |
| Մեղրալուսին                        | Ժ. Յակոբեան 20      |
| Մեսրոպաշունչ                       | » » 40              |
| Բանաստեղծին Զայնը                  | Ա. Տատրեան 10       |
| Մեր կեանքէն                        | Գ. Զօհրապ 30        |
| Ճամբուն մէջ որ Հոռոմ կը տանի       | Հ. Ժամկոչեան 20     |
| Անդաստան հայ մտքի                  | (Ա. և Բ. պրակը) 12  |
| Աստղերուն տակ                      | Գ. Զէքիճեան 35      |
| Երբ մեռնիլ գիտենք                  | Յ. Օշական 25        |
| Համապատկեր Հայ Գրականութեան        | » » 70              |
| Սփիւռքը և Իրաւ Բանաստեղծութիւնը    | » » 40              |
| ԺԹ. դարու Հայոց Գրակն. Պատմ.       | Ա. Արփիարեան 40     |
| Արմաւենի, Տարեգիրք (1938)          | Գալ.Շրջ.Միութ.      |
| Յաւիտենական Երուսաղէմը             | Ա. Արմէնեան 15      |
| Նաւը լերան վրայ                    | Կ. Զարեան 80        |
| «Զուարթնոց» Տարեգիրք               | Հ. Բալուեան 125     |
| Վարձու Սենեակ                      | Զ. Մ. Որբունի 50    |
| Մահուան պէս Զորաւոր                | Հութեր 05           |
| Ամբողջական Երկեր — Ա.              | Հ. Շանթ 80          |
| Սպիտակ Արդարութիւն                 | Ա. Անդրէասեան 50    |
| Ճակատագիր                          | Հեղինէ Դաւիթեան 50  |
| Թորգոմ Պատր. Գուշակեան             | Ա. Ալպոյանճեան 30   |
| Հայ Գաղթի. Պատմութիւնը             | » » 25              |
| Հայ Եկեղեցւոյ Սահմանադրութիւնը     | » » 15              |
| Մինաս Զերազ                        | » » 20              |
| Հայ Եպսկ. մը ի Հապէշիստան (Ժէ.դար) | » » 30              |
| Մերենց Հ. Գ. Բ. Ընկերակցութեան     | Ա. Արփիարեան ևն. 15 |

ՈՒՆԵՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼ

Ժամկոչեան Եղբարք, փոստարկի թիւ 327,

Դահլիճ



Արտատպարար